

ՄԻԱՄՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2019

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍՏ 6

Խմբի համարը

Նստարանի համարը

Հարգելի՛ դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: ***Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ձևաթուղթը:***


Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ձևաթղթում: Պատասխանների ձևաթղթի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորը:

Մաղթում ենք հաջողություն:

1

Նկարում Ա տառով նշված է.

- 1) գետի հունը
- 2) գետի ակունքը
- 3) ողողատը
- 4) գետաբերանը



2

Յուրաքանչյուր ժամային գոտի ընկած է 2 միջօրեականների միջև, որոնք իրարից հեռու են.

- 1) 90°
- 2) 60°
- 3) 45°
- 4) 15°

3

Պրահա (արլ. ե. 14°) և Տոկիո (արլ. ե. 140°) քաղաքների գոտիական ժամանակների տարբերությունը կլինի.

- 1) 8 ժամ
- 2) 2 ժամ
- 3) 4 ժամ
- 4) 6 ժամ

4

Մթնոլորտի ազդեցության հետևանքով առաջանում են.

- 1) ծովային հոսանքները
- 2) տարվա եղանակները
- 3) մակընթացությունը և տեղատվությունը
- 4) գեյզերները

5

Ամառային մուսսոնին հատուկ են.

- 1) անձրևային եղանակները
- 2) ցուրտ եղանակները
- 3) շոգ եղանակները
- 4) չոր եղանակները

6

Օրվա ընթացքում վայրի եղանակի փոփոխություններն ամենից առաջ պայմանավորված են.

- 1) մթնոլորտային ճնշման փոփոխություններով
- 2) քամու ուղղության և արագության փոփոխությամբ
- 3) օդի խոնավության փոփոխություններով
- 4) հորիզոնի նկատմամբ Արեգակի բարձրության փոփոխությամբ

7

Որևե տարածքի տեղումների տարեկան քանակը կախված չէ.

- 1) ծովային հոսանքների տեսակից
- 2) գերիշխող քամիների ուղղությունից
- 3) օվկիանոսների և ծովերի նկատմամբ վայրի ունեցած հեռավորությունից
- 4) օվկիանոսի ջրիաղիությունից

8


Արշավախումբը հս. լ. 6° , արմ. ե. 86° կոորդինատից շարժվեց հարավ՝ օրական անցնելով 33,3 կմ ճանապարհ: Արշավախմբի գտնվելու վայրի աշխարհագրական կոորդինատները 35 օր անց կլինեն.

- 1) հվ. լ. 10.5° , արմ. ե. 86°
- 2) հս. լ. 10.5° , արմ. ե. 86°
- 3) հվ. լ. 4.5° , արմ. ե. 86°
- 4) հս. լ. 4.5° , արմ. ե. 86°

9

Գծագրում ցույց տրված շեղման ուղղությունները ո՞ր կիսագնդին են վերաբերում:


- 1) արևմտյան
- 2) հյուսիսային
- 3) հարավային
- 4) արևելյան



10

Նկարում ո՞ր թվով է նշված ամենացածր մթնոլորտային ճնշումը.

- 1) 4
- 2) 1
- 3) 2
- 4) 3



11

«Մայրցամաք — անապատներ» գույգերից ընտրել *սխալը*.

- 1) Ավստրալիա — Ավազային մեծ անապատ և Վիկտորիա մեծ անապատ
- 2) Եվրասիա — Գոբի և Տակլա Մական
- 3) Աֆրիկա — Կալահարի և Նամիբ
- 4) Հարավային Ամերիկա — Լիբիական և Նուբիական

12

Ո՞ր կլիմայական գոտում կլիմայական մարզեր չեն առանձնացվում.

- 1) հասարակածային
- 2) մերձարևադարձային
- 3) բարեխառն
- 4) արևադարձային

13

Բնութագրումով որոշել գետը.

Այս գետը Եվրասիայի արևելյան մասում է և թափվում է Դեղին ծովը: Հայտնի է իր վարարումներով, որոնք կապված են մուսսոնային անձրևների հետ: Ո՞րն է այդ գետը.

- 1) Ամուր
- 2) Հուանհե
- 3) Յանցզի
- 4) Մեկոնգ

14

Ո՞ր պնդումն է սխալ.

- 1) Երկրի մագնիսական և աշխարհագրական բևեռները, հետևաբար նաև աշխարհագրական և մագնիսական միջօրեականները համընկնում են:
- 2) Գնդաձևության շնորհիվ նույն պահին Երկրի մակերևույթի տարբեր լայնություններում Արեգակի ճառագայթներն ընկնում են տարբեր անկյան տակ:
- 3) Երկրի ձգողության ուժի հետևանքով ծանր նյութերն իջել են ներքև, թեթևները՝ բարձրացել:
- 4) Երկրի ձգողական մեծ ուժի շնորհիվ օդը, մարմինները չեն հեռանում նրանից:

15

Ո՞ր սահմանումն է սխալ.

- 1) Աշխարհագրական թաղանթի այն մասը, որը հարակից տեղանքներից տարբերվում է իր ինքնատիպ մակերևույթով, կլիմայով, ջրերով, հողաբուսական ծածկույթով, կենդանական աշխարհով, այդ բաղադրիչների կապերով ու փոխազդեցություններով, կոչվում է բնատարածքային համալիր:
- 2) Բնատարածքային համալիրների փոփոխությունն ըստ բարձրության կոչվում է վերընթաց գոտիականություն:
- 3) Բնատարածքային համալիրների փոփոխությունն ըստ աշխարհագրական լայնության կոչվում է լայնակի կամ հորիզոնական գոնայականություն:
- 4) Մայրցամաքների և օվկիանոսների սահմաններում առանձնացվող, երկրագունդը հասարակածից բևեռներ ուղղությամբ գոտևորող բնատարածքային համալիրները կոչվում են բնական գոնաներ:

16

«Գետ — օվկիանոս» զույգերից ընտրել ճիշտը.

- 1) Մաքենզի — Խաղաղ
- 2) Նիգեր — Հնդկական
- 3) Կոլումբիա — Հյուսիսային սառուցյալ
- 4) Պարանա — Ատլանտյան

17

Ո՞ր թերակղզիներն են մխրճվում Մեքսիկական ծոց.

- 1) Յուկատան և Կալիֆոռնիա
- 2) Ֆլորիդա և Կալիֆոռնիա
- 3) Յուկատան և Լաբրադոր
- 4) Ֆլորիդա և Յուկատան

18


Ո՞ր շարքի գետերն են հոսում արևմուտքից արևելք ուղղությամբ.

- 1) Օբ, Լենա, Վոլգա
- 2) Ինդոս, Մեկոնգ, Տիգրիս
- 3) Դնեպր, Իրավադի, Ենիսեյ
- 4) Դանուբ, Ամուր, Յանցզի

19

Ո՞ր ծոցն է քարտեզում նշված Դ տառով.

- 1) Մեքսիկական
- 2) Ֆանդի
- 3) Սուրբ Լավրենտիոսի
- 4) Հուդզոնի



20

Ո՞ր գետն է քարտեզում նշված Ե տառով.

- 1) Կոլումբիա
- 2) Ռիո Գրանդե
- 3) Միսսիսիպի
- 4) Կոլորադո

21

Աշնանային գիշերահավասարի օրը հյուսիսային կիսագնդում.

- 1) ձմեռ է
- 2) գարուն է
- 3) ամառ է
- 4) աշուն է

22

Ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Դրակոնյան լեռները հին են և քայքայված:
- 2) Սկանդինավյան լեռներն առաջացել են ալպյան լեռնակազմության ժամանակ:
- 3) Վերխոյանսկի և Չերսկու լեռները Խաղաղօվկիանոսյան գեոսինկլինալային գոտում են:
- 4) Կուր-Արաքսյան հարթավայրն առաջացել է պլատֆորմի վրա:

23

Արեգակի ճառագայթների անկման անկյունը Երևանում մարտի 21-ի կեսօրին կազմում է մոտ.

- 1) 90°
- 2) $26,5^\circ$
- 3) 50°
- 4) $73,5^\circ$

24


Հյուսիսային Եվրոպա տարածաշրջանի վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Տարաբնակեցման ցանցում գերակշռում են խոշոր գյուղական բնակավայրերը:
- 2) Աչքի է ընկնում բնակչության բարձր բնական աճով:
- 3) Բնակչության կյանքի միջին տևողությունը բարձր է:
- 4) Բնակչության խտությամբ գերազանցում է Եվրոպայի մյուս տարածաշրջաններին:

25

Դիագրամում տրված է աշխարհի բնակչության բաշխումն՝ ըստ ծովից ունեցած հեռավորության: Ո՞ր հեռավորության գոտուն է համապատասխանում 2 թիվը.

- 1) 1000 կմ-ից ավելի
- 2) մինչև 50 կմ
- 3) 50–200 կմ
- 4) 500–1000 կմ



26

«Ժողովրդագրական պայթյունի» գլխավոր պատճառն է.

- 1) զարգացող երկրներում բնակչության մահացության նվազումը ծնելիության բարձր մակարդակի պահպանման պայմաններում
- 2) զարգացած երկրներում բնակչության բարձր բնական աճը
- 3) կանանց կրթական մակարդակի բարձրացումը
- 4) զարգացող երկրներում քաղաքաբնակների թվի ավելացումը

27

Քաղաքների աճի ու զարգացման գործընթացն՝ ի հաշիվ արվարձանների, կոչվում է.

- 1) տարաբնակեցում
- 2) ուրբանիզացում
- 3) կեղծ ուրբանիզացում
- 4) սուբուրբանիզացում

28

Բնութագրումով որոշել պետությունը.

Այս ծովային պետությունն աշխարհի զարգացած և հզորագույն երկրներից է: Ամենաբարձր զագաթը գործող հրաբուխ է: Միազգ պետություն է: Աչքի է ընկնում բնակչության բարձր միջին խտությամբ: Ո՞րն է այդ պետությունը.

- 1) Հնդկաստանը
- 2) Ռուսաստանը
- 3) Ճապոնիան
- 4) Չինաստանը

29

Որքա՞ն կկազմի երկրի բնակչության մահացության ցուցանիշը, եթե ծնելիությունը 24 ‰ է, բնական աճը՝ 18 ‰.

- 1) 6 ‰
- 2) 9 ‰
- 3) 16 ‰
- 4) 42 ‰

30

«Պետություն — պետական կառավարման ձև» գույգերից ընտրել ճիշտը.

- 1) Նիդերլանդներ — սահմանադրական միապետություն
- 2) Ճապոնիա — բացարձակ միապետություն
- 3) Գերմանիա — նախագահական հանրապետություն
- 4) ԱՄՆ — խորհրդարանական հանրապետություն

31

Ո՞ր շարքի բոլոր երկրներն ունեն դաշնային պետական կառուցվածք.

- 1) Ճապոնիա, Շվեյցարիա, Նիգերիա, Եգիպտոս
- 2) Ռուսաստան, ԱՄՆ, Թուրքիա, Ավստրալիա
- 3) Կանադա, Բրազիլիա, Գերմանիա, Հնդկաստան
- 4) Իրան, Լեհաստան, Արգենտինա, Ֆրանսիա

32

«Արտադրանք — արդյունաբերության ճյուղ» գույգերից ընտրել *սխալը*.

- 1) պողպատ — մետաղաձուլություն
- 2) տրիկոտաժ — թեթև արդյունաբերություն
- 3) պլաստմասսա — մեքենաշինություն
- 4) կաուչուկ — քիմիական արդյունաբերություն

33

Ո՞ր շարքի երկրներն են առաջատար պողպատի ձուլմամբ.

- 1) ԱՄՆ, Կանադա, Մեծ Բրիտանիա
- 2) Ավստրալիա, Ֆրանսիա, Իտալիա
- 3) Իրան, Ռուսաստան, Թուրքիա
- 4) Չինաստան, Ճապոնիա, Հարավային Կորեա

34

Ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Էլեկտրաէներգիայի համաշխարհային արտադրության 50 %-ը բաժին է ընկնում զարգացող երկրներին:
- 2) Վառելիքային արդյունաբերությունը զբաղվում է էլեկտրաէներգիայի արտադրությամբ և այն սպառողին մատակարարելով:
- 3) Նավթի համաշխարհային պաշարների շուրջ 9/10-ը կենտրոնացված է զարգացած երկրներում:
- 4) Մակընթացային էլեկտրակայանները շրջակա միջավայրը չեն աղտոտում:

35

Աքվակուլտուրա է կոչվում.

- 1) ձկների և ջրային այլ կենդանիների արհեստական բուծումը փակ ջրավազաններում
- 2) ձկների և այլ ծովային օրգանիզմների որսը
- 3) ծովային օրգանիզմների բնական վերարտադրությունը
- 4) ծովից հանքային ռեսուրսների արդյունահանումը

36

Ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) ԳՏՀ-ի բնորոշ գիծն է գիտության սրընթաց զարգացումը, որի արդյունքում գիտությունը վերաճում է անմիջական արտադրողական ուժի:
- 2) ԳՏՀ-ի շնորհիվ արտադրությունը տեղաբաշվիտում է գիտական և կրթական կենտրոններից բավականին հեռու:
- 3) ԳՏՀ-ի շնորհիվ արտադրության տեղաբաշխման վրա բնական գործոնների ազդեցությունը սկսում է մեծանալ:
- 4) ԳՏՀ-ի ազդեցությամբ միջազգային առևտրի ապրանքային կառուցվածքում նվազել է պատրաստի արտադրանքի բաժինը, ավելացել է հումքի և վառելիքի բաժինը:

37

Ներքին ջրային տրանսպորտը զարգացած է.

- 1) Իրանում
- 2) Հայաստանում
- 3) Ճապոնիայում
- 4) Գերմանիայում

38

Բնութագրումով որոշել արդյունաբերության ճյուղը.

Արդյունաբերության այս ճյուղն ունի լայն հումքային բազա. բնական հանքային հումք, արդյունաբերության այլ ճյուղերի թափոններ: Ո՞ր ճյուղն է.

- 1) թեթև արդյունաբերությունը
- 2) քիմիական արդյունաբերությունը
- 3) մեքենաշինությունը
- 4) մետաղաձուլությունը

39

Թուրքիային սահմանակից են.

- 1) Օմանը և Ռուսաստանը
- 2) Իսրայելը և Իրանը
- 3) Սաուդյան Արաբիան և Վրաստանը
- 4) Սիրիան և Հունաստանը

40

Բնութագրումով որոշել պետությունը.

Հյուսիսային Եվրոպայի այս պետությունը աշխարհում առավել խտաբնակներից է: Աչքի է ընկնում ուրբանիզացման բարձր մակարդակով: Մայրաքաղաքը ծովային խոշոր նավահանգիստ է: Ո՞րն է այդ պետությունը.

- 1) Շվեդիան
- 2) Նորվեգիան
- 3) Մեծ Բրիտանիան
- 4) Ֆինլանդիան

41

Հնդկաստանի վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Թեթև արդյունաբերության առաջատար ճյուղերից է բամբակյա գործվածքների արտադրությունը:
- 2) Էլեկտրաէներգիայի գերակշիռ մասն արտադրվում է ատոմային էլեկտրակայաններում:
- 3) Սև մետաղաձուլությունը տեղաբաշխված է երկրի արևմուտքում:
- 4) Հանքային հումքի բացակայության պատճառով արդյունաբերության կառուցվածքում բացակայում է քիմիական արդյունաբերությունը:

42

ԱՄՆ-ի Կենտրոնական հարթավայրերի հյուսիսում ձևավորվել է.

- 1) «բամբակենու գոտին»
- 2) «բրնձի գոտին»
- 3) «եգիպտացորենի գոտին»
- 4) «ցորենի գոտին»

43

Ո՞ր գետերի միախառնումից է առաջանում Շատ-Էլ-Արաբ գետը.

- 1) Տիգրիս և Եփրատ
- 2) Արևմտյան Եփրատ և Արևելյան Եփրատ
- 3) Արաքս և Կուր
- 4) Արևմտյան Տիգրիս և Արևելյան Տիգրիս

44

«Գետ — ակունք» զույգերից ընտրել սխալը.

- 1) Տիգրիս — Վասպուրականի լեռներ
- 2) Արևմտյան Եփրատ — Ծաղկավետ լեռներ
- 3) Արաքս — Բյուրակն լեռնազանգված
- 4) Արածանի — Ծաղկանց լեռներ

45

Հայկական լեռնաշխարհի կլիմայի վերաբերյալ ո՞ր պնդումն է սխալ.

- 1) Միջնաշխարհում տարեկան տեղումների միջին քանակը 1000–1200 մմ է:
- 2) Օդի բացարձակ առավելագույն և նվազագույն ջերմաստիճանների տատանման լայնույթն անցնում է 90°C-ից:
- 3) Բացարձակ առավելագույն ջերմաստիճանը գրանցվել է Ուրմիա լճի ավազանում:
- 4) Տեղումների քանակն ամենաքիչը Արարատյան, Նախիջևանի և Ուրմիայի գոգավորությունների հատակային մասերում է՝ 300 մմ-ից պակաս:

46

ՀՀ լեռնագրության վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Ուրծի լեռնաշղթայից սկսվում և դեպի արևելք տարածվում են Բարգուշատի և Զանգեզուրի լեռնաշղթաները:
- 2) Սևանա լիճը եզրավորված է միայն ծալքաբեկորավոր լեռներով:
- 3) ՀՀ ամենաբարձր ծալքաբեկորավոր լեռնագագաթը Կապուտջուղն է:
- 4) Աշոցքի սարահարթում են Ծղուկ և Մեծ Իշխանասար գագաթները:

47

Փոքր քիմիայի արտադրատեսակներ են.

- 1) քիմիական ռեակտիվները և վիտամինները
- 2) լաքերը և պլաստմասսան
- 3) ացետիլենը և քլորոպրենային կաուչուկը
- 4) ծծմբաթթուն և պղնձարջասպը

48

«Վարչական շրջան — կենտրոն» գույզերից ընտրել *սխալը*.

- 1) Շահումյան — Քարվաճառ
- 2) Ասկերան — Ստեփանակերտ
- 3) Հաղրութ — Հաղրութ
- 4) Մարտակերտ — Մարտակերտ

49


Տավուշի մարզի վերաբերյալ ո՞ր պնդումն է *սխալ*.

- 1) Ընդերքը հարուստ է մետաղային օգտակար հանածոներով:
- 2) Հարուստ է հանքային աղբյուրներով:
- 3) Հարուստ է բենթոնիտային կավերի պաշարներով:
- 4) Մարզի տարածքում կան գորշ ածխի պաշարներ:

50

Ո՞ր օվկիանոսային հոսանքն է քարտեզում նշված Ա տառով.

- 1) Պերուական
- 2) Գվիանական
- 3) Բրազիլական
- 4) Ֆոլկլենդյան



51

Ո՞ր մայրաքաղաքն է քարտեզում նշված Ջ տառով.

- 1) Կարակաս
- 2) Բոգոտա
- 3) Հավանա
- 4) Ասունսիոն

52

Վայրի հասցագրիների պահպանության ու վերարտադրության նպատակով կազմակերպված ՀՀ հատուկ պահպանվող տարածքներից է.

- 1) Խոսրովի արգելոցը
- 2) Էրեբունիի արգելոցը
- 3) Դիլիջանի ազգային պարկը
- 4) Շիկահողի արգելոցը

53

Ջրային ռեսուրսներով հարուստ երկրներ են.

- 1) Լիբիան և Սաուդյան Արաբիան
- 2) Քուվեյթը և Եգիպտոսը
- 3) ԱՄԷ-ն և Կատարը
- 4) Նորվեգիան և Ֆինլանդիան

54

Ո՞ր բնական ռեսուրսներով են համեմատաբար աղքատ լեռնային տարածքները.

- 1) վառելիքային
- 2) ջրաէներգետիկ
- 3) մետաղային
- 4) ռեկրեացիոն

55

Բնական ռեսուրսների ընդհանուր քանակի (պաշարների) հարաբերակցությունը դրանց տարեկան օգտագործման քանակին կոչվում է.

- 1) ռեսուրսի տեղաբաշխում
- 2) ռեսուրսապահովվածություն
- 3) ռեսուրսի գնահատում
- 4) ռեսուրսախնայողություն

56

Գրել նավարկելի ջրանցքների համարները.

- | | |
|--------------|-----------|
| 1) Թաթարական | 5) Կուկի |
| 2) Ֆլորիդայի | 6) Քիլի |
| 3) Բերինգի | 7) Ջոնսոն |
| 4) Պանամայի | 8) Սուեզի |

57

Գրել Խաղաղ օվկիանոսում և նրա ծովերում գտնվող կղզիների և կղզեխմբերի համարները.

- | | |
|--------------|---------------|
| 1) Ֆիջի | 5) Իսլանդիա |
| 2) Հավայան | 6) Ֆիլիպինյան |
| 3) Ճամայկա | 7) Շախգբերգեն |
| 4) Շրի Լանկա | 8) Թայվան |

58

Տրված են ծովային տաք հոսանքներ: Գրել Խաղաղ օվկիանոսի ծովային հոսանքների համարները.

- | | |
|--------------------|----------------------------|
| 1) Գվինեական | 5) Հյուսիսխաղաղօվկիանոսյան |
| 2) Գվիանական | 6) Գոլֆստրիմ |
| 3) Կուրո Սիո | 7) Արևելաավստրալական |
| 4) Ասեդի հրվանդանի | 8) Ալյասկայի |

59

Գրել այն կենդանատեսակների համարները, որոնք հիմնականում տարածված են Հյուսիսային Ամերիկայում.

- | | |
|--------------|----------------|
| 1) կենգուրու | 5) կոնդոր |
| 2) բիզոն | 6) կարիբու |
| 3) բադակտուց | 7) ցեցե |
| 4) եքիդնա | 8) էմու ջայլամ |

60

Գրել այն պետությունների համարները, որոնք սահմանակցում են Ֆրանսիային.

- | | |
|-----------------|------------------|
| 1) Բելգիա | 5) Ավստրիա |
| 2) Պորտուգալիա | 6) Ման Մարինո |
| 3) Դանիա | 7) Լյուքսեմբուրգ |
| 4) Նիդերլանդներ | 8) Լիխտենշտայն |

61

Գրել հրաբխային ծագում ունեցող լճերի համարները.

- | | |
|-------------------|------------|
| 1) Ալ | 5) Սև |
| 2) Քարի | 6) Փարվանա |
| 3) Արմադանի | 7) Պարզ |
| 4) Այդր (Մեծամոր) | 8) Ակնա |

62

Տրված պետությունները դասավորել երկաթուղիների երկարության նվազման կարգով.

- 1) Ռուսաստան
- 2) Գերմանիա
- 3) ԱՄՆ
- 4) Հնդկաստան

63

ՀՀ տրված հողային տիպերի համարները դասավորել ըստ հումուսի պարունակության հետևյալ հաջորդականությամբ՝ 4–11 %, 1–2 %, 8–13 %.

- 1) կիսաանապատային գորշ հողեր
- 2) մարգագետնատափաստանային
- 3) լեռնային սևահողեր

(64-65). Երկրի բնակչության թիվը 1.8 մլն է, բնական աճի գործակիցը՝ 16 ‰: Տարվա ընթացքում ներգաղթը կազմել է 12 400 մարդ, արտագաղթը՝ 8 520 մարդ.

64

Որոշել բնակչության բացարձակ բնական աճը:

65

Որոշել բնակչության մեխանիկական աճը:

66

Ռուսական «Միոնի» գիտակայանը հվ. լ. 66°-ի վրա է: Բնեռախույզները, «Միոնի» գիտակայանից դահուկներով շարժվելով 2,4 կմ/ժ միջին արագությամբ, քանի՞ ժամում կհասնեն Հարավային բևեռ:

(67-68). Լեռան ստորոտին մթնոլորտային ճնշումը 500 մմ է, իսկ օդի ջերմաստիճանը՝ +28°:
Լեռան գագաթին օդի ջերմաստիճանը +13° C է (հաշվարկը կատարել 6°-ով).

67 Որոշել լեռան հարաբերական բարձրությունը:

68 Որոշել մթնոլորտային ճնշումը լեռան գագաթին:

Թուրքիայի վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք՝ սխալ.

- 1) Հարուստ է նավթի ու բնական գազի պաշարներով:
- 2) Ազգային եկամտում արդյունաբերության բաժինը զգալիորեն գերազանցում է ծառայություններին:
- 3) Էլեկտրաէներգիայի գերակշիռ մասն արտադրվում է ջեկերում:
- 4) Ունի զարգացած թեթև արդյունաբերություն, որի համար հումք է ծառայում սեփական գյուղատնտեսական արտադրանքը:
- 5) Գյուղատնտեսության առաջատար ճյուղն անասնապահությունն է:
- 6) Բուսաբուծության մեջ մեծ է հացահատիկային և տեխնիկական մշակաբույսերի բաժինը:

ՀՀ էլեկտրաէներգետիկայի վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք՝ սխալ.

- 1) Էլեկտրաէներգետիկայի կառուցվածքում ամենամեծը ջրաէլեկտրակայանների բաժինն է:
- 2) Ջերմաէլեկտրակայանները տեղակայված են Հրազդանում, Երևանում և Վանաձորում:
- 3) Մեծամորի աէկը միակ ատոմակայանն է Հարավկովկասյան տարածաշրջանում:
- 4) Հրազդան և Որոտան գետերի վրա կառուցվել է ջրաէլեկտրակայանների կասկադ:
- 5) Գործում են ջրային, ջերմային, ատոմային, ինչպես նաև քամու ուժով աշխատող էլեկտրակայաններ:
- 6) Էլեկտրաէներգետիկան բացառապես կախված է ներմուծվող էներգակիրներից: